թէ 'ի յերեսս երկրի և թէ 'ի խոր ծովու ունէին զօրութիւն հոգւոյ բանականի որ ծանիցէին անօրէնութիւն գործոյ մերոյ և բառցուն ազատութեան 'ի բնութենէ մերմէ և անկանիլ բնութիւնս մեր լծորդի 'ի ծառայութեան և հաւասարիլ ընդ ինքեանց և նմանեալ նոցայ, նա՛ և ես եթէ իմանային, որ մեք ո՛չ պահեմք պատիւն ազատութեան մերոյ և ո՛չ պատիւն զօրութեան բանական հոգւոյ մերոյ արիութեամբ, Ես ո՛չ երկբայիմ, զի իսկոյն նոքայ հանէին երկիւղ 'ի սրտէ իւրեանց և յանդգնէին 'ի հնազանդութենէ մերմէ, և նոքայ իշխէին 'ի վերայ մեր որպէս յիշխեցին ինքնակամ իշխանք 'ի անցելում ժամանակի, վկայութիւն բանիս որում տեսանեմք այժմոյս ոմանք 'ի գազանաց իշխեն 'ի վերայ մեր և գիշատեն ոմանց 'ի մէջ մեր նոցայ որ ո՛չ պահելով պատիւս ազատութեան իւրոյ ո՛չ կրթելով զինքն 'ի զէնս և զասպարս՝ ընթանան վարիւք անասնոց և անբանից և գիշատին 'ի նոցանէ, ուրեմն եթէ չիցէ առաւել արժանի վասն պատուոյ մարդոյս Օրէնս և սահմանս, թերևս հարկաւոր է մեզ ունիլ Օրէնս ու սահմանս վասն ջատագովելոյ անձին մերոյ 'ի դժնդակ գազանաց և գիշատօղ գայլից, զի մի լինիցի զի զուր պատառեսցուք 'ի գազանէ ինքնակամէ, այլ որպէս բազմիցս ասացի և 'ի վերայ նոյն մտաց հաստատուն կամ և հաստատեմ 'ի միտս ձեր, որ